

**ՓՈՂԻ ՈՒՇԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի հարուստ մարթ, շատ հարուստ մարթ, մի տղա յա ունեցել: Տղեն օտարականների հետ ապրուստն ուտելիս ա էլել, ուտացնելիս ա էլել: Նրանց հետ բարեգամություն ու հնգերութին անելիս ա էլել:

Հերը մորը ասում ա, որ.— Այ կնիկ, մեր տղեն ջահել տղա յա և իրեն կարողութինն ուրիշներին ուտացնում ա և ժամանակին պտի քյասիբանալ, արի խելք-խելքի տանք, խոսկ ու մին անենք, մեր էս փողիցը մի քիչ պհենք, որ ժամանակին մեր տղի տեղը պտի նեղանալ, մեր ըշխարհը զլուխ պտի առնիլ հեռանալ, էդ փողը դրան կփրկե:

Խոսկ ու մին են անում, էդ փողիցը տանում պհում իրանց գոմշի թովլումը: Թովլի օջորքումը եշկով փողը պհում են, մի պրանգալ էլ եշկիցը կախ անում: Եդո, օրից մի օր տղի փողը հատնում ա: Էլ ի՞նչ հնգեր, ի՞նչ բան, երբ որ փողը հատավ, նրան մոռացան: Հաշվեցին շաշ, խելագար և բարեգամությանը վերչ տվին նրա հետ:

Տղեն մտածեց:

Երբ որ տեհավ իրան մրթատեղ դնող չկա, հերն էլ մահացել էր, ասավ.— Մայրիկ, էս շաշվել եմ, գնում եմ մեր ըշխարհից հեռանամ, որ ըսկի ինձ ճնանչող չըլի, թե էս ով եմ, ում տղեն եմ: Մերը տղին աղաչեց և խնթեց. ասավ,— Տղա, մի հեռանալ մեր աշխարհից, ամեն բան անցողական ա, կգա—անց կկենա:

Օրից մի օր, մի տոն օր, հին ժամանակներումը, որ խաչերը դնեին, էդ տղեն տեհավ՝ հրես իրան հնգեր, բարեկամ տղեքը խըմբված, գնում են էդ տոն օրը էդ սրփի մոտ քեփ անելու: Ինքը շատ տխրեց իրան մեջ, որ իրան իսկի բարև չտվին:

Կտրիցը ցձացավ տուն և մորը խնթեց, ասավ.— Մայրիկ ինձ թույլ տուր, էս գնամ այս ըշխարհից հեռանամ, իմ բարեգամներն ու հնգեր տղեքն ինձ խելագարի տեղ են դնում: Մերը տղին ասավ.— Բալա՛ւ, ի՞նչ ա պատահել, էս մենակ մի տղա ունիմ, էն էլ ուզում էս հեռանալ այս աշխարհից. բա մենակ ի՞նչ անեմ էս: Եթե ուզում էս գնալ քո բարեգամների ու հնգերտանց մոտ քեփ անես, մենք ունինք մի որցակ, մի գրվանքա էլ էդ կճարեմ հարևանուց, գաթա կթխեմ, ագոակ կթխեմ, կվերցնես, կգնաս նրանց հետ քեփ կանես:

Եվ էդպես էլ արավ մերը: Պատրաստեց, մի աղլուխում կապեց, բոխչա շինեց և տղեն գնաց իրեն հնգերտանց հետ քեփ անելու: Ճանապարհին բոխչեն դրեց մի քարի վրա և ինքը քիչ հեռացավ ջրվեթի: Անդեր բազեն որդիանց որդի աչկը նի առավ, էկավ վերցրուց բոխչեն ու տարավ: Տղեն տխուր ման գալով, գնաց հնգերտանց սամթը, բայց ամանչեց նրանց մոտենալ: Հնգերտանցից մի քանիսը խղճացին, մի քանիսն էլ վրեն ծիծաղելու համա հրավիրեցին իրենց սեղանին: Հնգերտինքը չիմն էլ հարուստ էին, գեղի քյոխվեն, տերտերը, գզիրը և մնացած հարուստին:

Կերան, խմեցին և ասին.— Եկեք ամենքս մի պատմութին անենք մեր գլխի էկածնուց: Սկսեցին ամենքը մի պատմութին անել: Հերթն էկավ էն տղին:

Նա ըսկսեց մանդրամասը պատմել, թե.— Այ հնգերտինք, խելսճ մերս մի որցակ ուներ, մորթեց, հրեվաննուց էլ մի գրվանքա էղ ուզեց, գաթա և ագոակ թխեց, մի բոխչա շինեց, հետս բերեցի, սհեսե՛՛ բազեն տարավ: Ես էլ ըմանչեցի, թե ձեր կուշտը գամ, բայց դուք հրավիրեցիք: Ամենքը մի տեղից գլխին տվեցին, վրեն ծիծաղեցին, թե հրես-հրես, դրուստ որ շաշվել ա, բա մորթած հավը բազեն կտանի՞ :

Տղի տրամադրութինն ավելի վաղացավ, տխրեց և անպայման վճռեց էլ մորը չլսե, գնա էս աշխարհից հեռանա: Էկավ տուն:

Մերն ասավ.— Բալա՛, ինչի՞ յա քեփդ խարաք, ես քեզ դրգեցի, որ ուրախ եղ գաս:

Ասավ.— Մերա՛, ես էս աշխարից պիտի հեռանամ, մի բան որ դուզն ասում ես, ինձ սուտ են հանում, էս աշխարում դժոխքուն չկա:

Էստեղ մերը պատմեց տղին և ասաց.— Խեղճ քու հերը գիդեր, որ դուն նեղության մեջ տիս ընգնիլ, բարեգամ և հնգերտինքդ հեռանալ տին քեզանից, և նա մի վասիաթ արավ, թե. «Իմ միևնուճար տղին ես դիմիշ չեմ անում բան ասեմ, համա ես գիդեմ, նրա բարեգամները նրա փողը կուտեն և կհեռանան նրանից և շաշի տեղ կդնեն, նա չի տանիլ էս բանը և կուզենա էս ըշխարից հեռանալ: Հմա որ գնա էս ըշխարից հեռանա, մի տեղ համբալութին անե, կհարցնեն, թե. «Ո՛ւմ տղեն ես»: Որ իմանան, թե իմ տղեն ա, կծիծաղեն վրեն, թե՛ էնթավուր մարթիցն էս թավուր տղա դուս էկավ, էն վախտը թող իրա հոր վասիաթը հիշե, գնա, մեր գոմշի թովլումը մի պրանգավ կա կախ արած, ընդուցեն կախ ըլի, խեխտվի»:

Տղեն ինքն իրա մեջ մտածեց, թե.— Ըղորմածիկ հերս լավ ա մտածել, նա խելոք մարթ էր, տուժվելուց ավելի լավ ա՛ մի անքամից վերջ տամ կյանքիս:

Հոր վասիաթը մոր պատմելուց եղը տղեն վի կացավ, գնաց իրանց թովլեն: Ըստողը տարավ հետը, ոտի տակը դրեց, հասավ պրանգավին, օղ ու ճիտ արավ, գցեց շլինքը և կախ ընգավ: Հանկարծ տեսավ եշիկը գրգռալով վեր ընգավ: Տղեն մնաց գարմացած, իրան կորցրեց: Եղ ուշկի էկավ, եշիկը բաց արավ. տեհավ, ի՛նչ տեհավ, էն ըղորմածիկ իրան հոր խազինու կեսը եշիկումը դասած՝ էլ հարրանոցնի, էլ տասնանոցնի, էլ ոսկի, լիքը: Տղեն ուրախացավ, իրան միչումը որոշեց, ասավ.— Էս լավ էլավ, իմ ըղորմածիկ հերն էդ բոլորն իմացել ա, հմա ինչ փորցված մարթ ա էլել, հալբաթ իրան գլուխն էլ ա էկել:

Գնաց մորը պատմեց, մերն ասավ.— Բա, այ բալա, ըղորմածիկ քու հերը փորցված էր, գիդեր, որ քու հին բարեգամնին տհենց կանեն:

Տղեն ասավ.— Դե լավ, մերա, արի մի լավ քեփ սարքենք, մեր հին ու նոր բարեգամնուն չիմ կանչենք, մանավանդ տերտերին ու քոխավին, պաչողնքերին և ջահել տղերանցը:

Մերը մի լավ պատրաստութիւն տեհավ, մի ոչխար առավ, մորթեց, հաց թխեց, բրնձե փլավ արավ, կանչեցին: Տերտերն էկավ՝ անց կացավ սուփրի վերի ծերը, հետն էլ քոխավեն ու մնացած պաչողնքերը: Հմի տերտերը սուփրեն օխնիլ տի:

Տղեն ասավ.— Տերտեր ջան, կացի մի էրկու խոսկ ասեմ, եղնա քու օխնանքը կասես, կուտեք, ձեզանով անուշ:

Եվ ասավ.— Էս էրկու օրն ի՞նչ միտս ընդավ: Հորս գութանի բնատենն ընդի վեր ընգած էր, ասի— տանիմ թափ տամ, դոխագնու վրա՛ արևը գձեմ, ժանգը վեր գա, բերեմ սնի վրա փթաթեմ, պետկը կգա, էլի: Էն անդեր բազեն աչկը նի առավ, էկավ վի կալավ, տարավ:

Ամենքը մի կոնուց ասին.— Այ տղա, կտանի, կտանի, էթե բայդուշը դրա քեռին չլի, գութանը լարած կտանի:

Բոլորն էլ դրա խոսկին հավանութիւն տվին:

Դա թե.— Տերտեր ջան, պատճառն ի՞նչ ա, որ էփած հավը բազեն տանիլ չի, գութանի բնատենը կտանի, հլա դեռ գութանն էլ լարած կտանի, թե բայդուշն իրան քեռին չլի:

Ու դրա վրա մի խաղ ասավ.

Վառլու դուն ելլասն օղդան,

Ալլահ իգիթիա— սալմասն օղդան,

Բիր իգիթ քի յոխսուլու դուշեր,

Խալխա սալամ վերանդա՛ սալամ ալմազլար:

Բիր աղամ քի աղալդան մինըշի օլսա

Ինդի գալսն փիադա, դաշ բաշընա դուշար,  
Բիր արվադ օլար, վար օլանդա դայում  
Ղարդաշ յիղլար-իչալլար:

Յոխսուլու դոլշանդա— դոյում

Ղարդաշ յադ օլար<sup>1</sup>:

Էստեղ բոլորը սառած մնացին և հերթով, առանց բաժիններն ուտելու, դուս գնացին տնից՝  
փոք ու փոշման իրենց արածից:

---

<sup>1</sup> Հարուստը արյուն ունի բացե ի բաց,  
Աստվածը իգիթին չանտեսի (երեսից չգցի).  
Մի իգիթ, որ կաղքատանա  
Մարդկանց բարևելիս բարևը չեն առնի:

Մի մարդ, որ խելքից պակաս (նստող) լինի,  
(Այժմ) Այն ժամ կմնա հետիոտն, գլխին քար կընկնի:  
Մի կին, որ ամուր կլինի,  
Բարեկամներ (եղբայր) կհավաքվեն, կգովաբանեն (կխմեն)  
Երբ կաղքատանա  
Բարեկամները օտար կդառնան: